ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

15 մայիսի 2026 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Ղազարյանը, Սարգիս Մանվելյանը, Կարեն Ադամյանը, Լուսինե Աղախանյանը, Կարո Կարապետյանը, Սամվել Մալխասյանը, Արմեն Խաչատրյանը, Հովհաննես Հարությունյանը, Ռոբերտ Զեյնալյանը, Հրաչիկ Սարգսյանը, Գեղամ Բոյմուշակյանը, Աշոտ Խաչատրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Կարեն Քենդրջյան, Տիգրան Արմենակյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ասլան Ավետիսյանը

Նիստը արձանագրում էր բաժնի պետ՝ Իլոնա Խաչատուրյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.
1) Արարատ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 15-ի թիվ 4 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի սահմանամերձ Պարույր Սևակ և Երասխ բնակավայրերի ֆիզիկական և իրավաբանական անձանց անշարժ գույքի հարկի ցուցակները հաստատելու և գումարները փոխհատուցելու մասին:
3) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի

2026թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածներում փոփոխություն կատարելու մասին:
4)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2027թվականի բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին:
5) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 125-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ֆ. ՉԱՔԱՐՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Լ. ԹՈՒՆՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՍԻՆԱՆՅԱՆ
Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Գ. ԼԵՎՈՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 065-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԵՎ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.08.2015-ի թիվ 956-Ն, 18.12.2014թ.-ի թիվ 1444-Ն որոշումները, ինչպես նաև ավագանու կանոնակարգով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրում ֆիզիկական անձանց 2026թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն

հավելված 1-ի:
2. Հաստատել Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրում իրավաբանական անձանց 2026թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Երասխ բնակավայրում ֆիզիկական անձանց 2026թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Հաստատել Երասխ բնակավայրում իրավաբանական անձանց 2026թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 4-ի:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ֆ. ԶԱՔԱՐՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Լ. ԹՈՒՆՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՍԻՆԱՆՅԱՆ
Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Գ. ԼԵՎՈՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 066-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2026ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 137-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն որոշմամբ հաստատված թիվ 1,2,3 հավելվածների:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ֆ. ՁԱՔԱՐՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Լ. ԹՈՒՆՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՍԻՆԱՆՅԱՆ
Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Գ. ԼԵՎՈՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 067-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

«Ընկերությունների կողմից . վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001թ. մայիսի 15-ի Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան Արարատ համայնքին 2027թ. համար հաշվարկվել է 22 808 100 /քսաներկու միլիոն ութ հարյուր ութ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամի սուբվենցիա: Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2026 թվականի հունվարի 8-ի N 8-Ա որոշման պահանջների, հիմք ընդունելով մշակված և համայնքի ավագանու կողմից հավանության արժանացած 2027թ. բնապահպանական ծրագրի նախագիծը՝ ***ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հաստատել Արարատ համայնքի 2027 թվականի բնապահպանական ծրագիրը համաձայն հավելված 1-ի:

2. Նկատի ունենալով համայնքի համար ծրագրի հույժ կարևորությունը՝ առաջարկել համայնքի ղեկավարին հետամուտ լինել ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքներին՝

1) Առողջապահական սարքավորումների ձեռքբերում /ավտոմոտ հեմատոլոգիական վերլուծիչ-1 հատ, մեզի վերլուծիչ-1 հատ, հիվանդի խնամքի մոնիտոր-3 հատ, տոնոմետր մեխանիկական-3 հատ, գլյուկոմետր-2 հատ, մանկական պուլսօքսիմետր-2 հատ, օտոսկոպ-1 հատ/:

2) Փողոցային լուսավորության համակարգի կառուցում և վերակառուցում արևային և ԼԵԴ լուսատուներով քաղաք Արարատ, Նոյակերտ, Արարատ, Արմաշ, Սուրենավան, Ուրցաշանջ, Վարդաշատ և Զանգակատուն բնակավայրերում:

3. Ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և առողջապահության նախարարություններ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -13 Դեմ -0 Զեռնպահ -0

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ֆ. ՋԱՔԱՐՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Լ. ԹՈՒՆՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՍԻՆԱՆՅԱՆ
Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Գ. ԼԵՎՈՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 069-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 125-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով և ելնելով խիստ անհրաժեշտությունից՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Արարատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 14-ի «2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելու մասին» N 125-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ «շինարարության թույլտվության» բառակապակցությունը լրացնել «և (կամ) շինարարական թույլտվության ժամկետների երկարաձգման» բառակապակցությամբ:
2 Հաստատել փոփոխված հավելված 1-ը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ֆ. ՉԱՔԱՐՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Լ. ԹՈՒՆՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՍԻՆԱՆՅԱՆ
Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Գ. ԼԵՎՈՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 068-Ն)*

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՖԻՐԴՈՒՍ ՉԱՔԱՐՅԱՆ.
ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՍՊՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԼԱՐԻՍԱ ԹՈՒՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌԻՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՂԱՄ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍԵՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Իլոնա Խաչատուրյանը

_____